

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ազգային ժողովի ֆինանսավարկային եւ բյուջետայի հարցերի մշտական հանձնաժողովի 7-րդ գումարման 5-րդ նստաշրջանի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ

1. Կայացած նիստերի քանակը կազմել է 22-ը՝ 4 հերթական, 6 արտահերթ և 12՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների հետ համատեղ նիստեր («Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի նախնական քննարկումների):

2. Հանձնաժողովը գլխադասային է նշանակվել՝ **21 օրենքի նախագծի** (որոնցից՝ 2 օրենքների նախագծերի փաթեթներ)՝ ընդունվել են ամբողջությամբ՝ 12, դուրս է եկել շրջանառությունից՝ 1, դեռելու չեն ընդգրկվել օրակարգում՝ 5, ընդգրկվել են օրակարգում՝ 3 (որոնք քննարկվել եւ քվեարկվել է 1-ին ընթերցմամբ), **9 համաձայնագրի** (որոնցից՝ հաստատվել են 8, դուրս է եկել շրջանառությունից՝ 1):

3. **Նիստերի ընթացքում քննարկվել են՝**

3.1. **Օրենքների նախագծեր՝ թվով 20, որոնցից.**

➤ **12 ընդունվել են ամբողջությամբ՝**

1) Պ-582. «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին Հեղինակ՝ Միքայել Մելքունյան,

2) Պ-518. «Բանկերի եւ բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին, Հեղինակ՝ Աժ պատգամավոր՝ Արտակ Մանուկյան,

3) Կ-765. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին, Հեղինակ՝ ՀՀ կառավարություն (Հիմնական զեկուցող՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Արման Պողոսյան),

4) Պ-554. «Բանկային ավանդների ներգրավման մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին, Հեղինակներ՝ Աժ պատգամավորներ՝ Արտակ Մանուկյան, Վարազդատ Կարապետյան, Բաբկեն Թունյան,

5) Պ-554¹ «Սպառողական կրեդիտավորման մասին» օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին,

6) Պ-554² «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին,

7) Պ-554³ «Բանկերի եւ բանկային գործունեության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին,

8) Պ-554⁴ «Ապահովագրության եւ ապահովագրական գործունեության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին,

9) Պ-554⁵ «Վարկային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին,

10) Պ-626. «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների եւ ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին, Հեղինակ՝ Միքայել Մելքունյան,

11) Կ- 754. «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին, Հեղինակ՝ ՀՀ կառավարություն (Հիմնական զեկուցող՝ ՀՀ ֆինանսների նախարար Ատոմ Զանջուղազյան),

12) Կ- 752. ՀՀ օրենքի նախագիծը՝ «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին»

➤ **3 ընդգրկվել են օրակարգում, քննարկվել եւ ընդունվել են 1-ին ընթերցմամբ՝**

- 1) Խ-401. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին, Հեղինակ՝ «Լուսավոր Հայաստան» խմբակցություն (Հիմնական զեկուցող՝ Արկադի Խաչատրյան),
- 2) Կ-615. «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին, Հեղինակ՝ ՀՀ կառավարություն (Հիմնական զեկուցող՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Արման Պողոսյան),
- 3) Պ-703. «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», Հեղինակներ՝ Եղիշե Սողոմոնյան, Արտակ Մանուկյան, Տիգրան Ուլիխանյան, Վարդան Աթաբեկյան, Համազասպ Դանիելյան, Երջանիկ Հակոբյան (Հիմնական զեկուցող՝ Եղիշե Սողոմոնյան)

➤ **1 դուրս է եկել շրջանառությունից՝**

- 1) Խ-503. «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», Հեղինակ՝ «Լուսավոր Հայաստան» խմբակցություն

➤ **4 քննարկվել են հանձնաժողովի նիստում և քննարկումը կամ քվեարկությունը հետաձգվել է մինչև 2 ամիս ժամկետով՝**

- 1) Պ – 666. «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին, հեղինակներ՝ Արտակ Մանուկյան, Վարդան Աթաբեկյան, Համազասպ Դանիելյան, Երջանիկ Հակոբյան, Եղիշե Սողոմոնյան - համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 78-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի՝ հետեւյալ օրենքի նախագծի քվեարկությունը հետաձգվել է մինչեւ երկամսյա ժամկետով,
- 2) Պ – 763. «Բանկային ավանդների ներգրավման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին, հեղինակներ՝ Արտակ Մանուկյան, Բաբկեն Թունյան - համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 3-րդ մասի՝ օրենքների նախագծերի փաթեթի քննարկումը մշտական հանձնաժողովի նիստում հետաձգվել է մինչեւ երկամսյա ժամկետով,
- 3) Պ – 763¹ «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին, հեղինակներ՝ Արտակ Մանուկյան, Բաբկեն Թունյան - համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 3-րդ մասի՝ օրենքների նախագծերի փաթեթի քննարկումը մշտական հանձնաժողովի նիստում հետաձգվել է մինչեւ երկամսյա ժամկետով,
- 4) Պ – 763² «Սպառողական կրեդիտավորման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին, հեղինակներ՝ Արտակ Մանուկյան, Բաբկեն Թունյան - համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 3-րդ մասի՝ օրենքների նախագծերի փաթեթի քննարկումը մշտական հանձնաժողովի նիստում հետաձգվել է մինչեւ երկամսյա ժամկետով:

3.2. Համաձայնագրեր /թվով 9/.

➤ **8 քննարկվել և ընդունվել են՝**

- 1) Կ-653. «Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի միջեւ 2020 թվականի փետրվարի 7-ին ստորագրված «Մեղրիի սահմանային անցակետի ծրագիր» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին,
- 2) Կ-657. 2020թ. ապրիլի 7-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջեւ 2018 թվականի ֆինանսական, համագործակցության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին,

- 3) Կ-756. «Սոցիալական ներդրումների եւ տեղական զարգացման ծրագրի համար լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին,
- 4) Կ-757. Հայաստանի Հանրապետության եւ Վերականգնման վարկերի բանկի միջեւ «Համայնքային ենթակառուցվածքների ծրագիր II, փուլ 3 - մասհանման ժամկետի երկարաձգում» նամակ-համաձայնագիրը վավերացնելու մասին,
- 5) Կ-759. «Գերմանական ֆինանսական համագործակցություն Հայաստանի Հանրապետության հետ. «Զրային ռեսուրսների համալիր կառավարում/Ախուրյան գետ - փուլ 1» - մասհանման ժամկետի երկարաձգում» նամակ-համաձայնագիրը վավերացնելու մասին,
- 6) Կ-760. Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ճապոնիայի կառավարության միջեւ «Տնտեսական եւ սոցիալական զարգացում» դրամաշնորհի տրամադրման համաձայնագիրը վավերացնելու մասին,
- 7) Կ-768. «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց I - Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ» վարկային համաձայնագրի մասհանումների ժամկետի երկարաձգում եւ հետվճարման փոփոխված ժամանակացույց» նամակ-համաձայնագիրը վավերացնելու մասին
- 8) Կ-773. «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց III (ծրագրի 2-րդ փուլ). Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ» վարկային համաձայնագրի մասհանումների ժամկետի երկարաձգում եւ հետվճարման փոփոխված ժամանակացույց» նամակ-համաձայնագիրը վավերացնելու մասին

➤ **1 քննարկվել է, Աժ լիազումար նիստում չի ընդունվել, դուրս է եկել շրջանառությունից`**

- 1) Կ-758. Հայաստանի Հանրապետության եւ Վերականգնման վարկերի բանկի միջեւ 2020 թվականի հուլիսի 1 -ին ստորագրված «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց III (ծրագրի 2-րդ փուլ). Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ» վարկային համաձայնագրի մասհանումների, ժամկետի երկարաձգում եւ հետվճարման փոփոխված ժամանակացույց» նամակ-համաձայնագիրը վավերացնելու մասին

3.3. Տեղեկանքներ /թվով 4/.

- 1) 2020 թվականի պետական բյուջեի առաջին եռամսյակի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկանքը,
- 2) Բյուջետային գրասենյակի հաշվետվությունը` 2020 թվականի առաջին եռամսյակում կատարած աշխատանքների վերաբերյալ,
- 3) Բյուջետային գրասենյակի հաշվետվությունը` 2020 թվականի երկրորդ եռամսյակում կատարած աշխատանքների վերաբերյալ,
- 4) Բյուջետային գրասենյակի հաշվետվությունը` 2020 թվականի երրորդ եռամսյակում կատարած աշխատանքների վերաբերյալ:

3.4. Հանձնաժողովի որոշումներ /թվով 3/.

- 1) Հաստատեց 2020 թվականի սեպտեմբերի 24-ին Ազգային ժողով ներկայացված «Ոչ վարկային թալանին» նախաձեռնության կոլեկտիվ Հանրագրի պատասխանի որոշման նախագիծը,
- 2) Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Ազգային ժողովի կանոնակարգ>> սահմանադրական օրենքի 163-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, ինչպես նաև Ազգային ժողովի աշխատակարգի 109-րդ կետով, հաստատեց Աժ բյուջետային գրասենյակի փորձագետների աշխատանքային պայմանագրերի վերաբերյալ որոշումների նախագծերը (թվով 2) և դիմեց Ազգային ժողովի նախագահին հետևյալ առաջարկով. Ազգային ժողովի բյուջետային գրասենյակի համակարգող փորձագետ Գագիկ Գառնիկի Բարսեղյանի և

Ազգային ժողովի բյուջետային գրասենյակի փորձագետ Աշոտ Արծրունի Եղիազարյանի ու Ազգային ժողովի աշխատակազմի միջև կնքված աշխատանքային պայմանագրերը հինգ տարի ժամկետով երկարաձգելու վերաբերյալ:

3.5. «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագիծը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2021 թվականի վարչական ծախսերի և կապիտալ ներդրումների նախագիծը /թվով 12 նիստ/ (Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների հետ համատեղ նախնական քննարկումների կազմակերպում և իրականացում):

3.6. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 145-րդ հոդվածի համաձայն`

1) Հայաստանի Հանրապետության Հաշվեքննիչ պալատի անդամի թեկնածության և Ազգային ժողովին այդ պաշտոնին թեկնածու առաջարկելու վերաբերյալ քննարկում (Հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության Հաշվեքննիչ պալատի անդամի թափուր տեղի համար Ազգային ժողովին առաջարկեց "Իմ քայլ" խմբակցության կողմից ներկայացված Կարեն Վասիլի Առուստամյանի թեկնածությունը) – 2 անգամ,

2) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի անդամի թեկնածության և Ազգային ժողովին այդ պաշտոնին թեկնածու առաջարկելու վերաբերյալ քննարկում (Հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի անդամի տեղի համար Ազգային ժողովին առաջարկեց "Իմ քայլ" խմբակցության կողմից ներկայացված Դավիթ Ռոբերտի Նահապետյանի թեկնածությունը):

4. Հանձնաժողովի 2019 թվականի ապրիլի 4-ի նիստում ընդունած որոշման համաձայն (ինչը վերաբերվում է քաղաքացիների 2019-2020 թվականների ընդունելության տարեկան ժամանակացույցի հաստատմանը)` 5-րդ նստաշրջանի ընթացքում հանձնաժողովը ունեցել է 4 ընդունելություն, սակայն քաղաքացիներ չեն գրանցվել:

5. ՀՀ ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրվել է ԱԺ կայքի հանձնաժողովի էլեկտրոնային էջում: